Հավելված № 1
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2020 թվականի հոկտեմբերի 9 -ի
թիվ 36 -Ա որոշման

# ԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## ԳԼՈՒԽ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ՝ Պաշտպան) առընթեր Խոշտանգումների կանխարգելման խորհրդատվական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմավորման և գործունեության կարգը (այսուհետ՝ Կարգ): Կարգը սահմանում է Խորհրդի կազմավորմանը և գործունեությանն առնչվող հարցերը, Խորհրդի նպատակը, գործառույթները, անդամների կարգավիճակը, նրանց լիազորությունների կասեցման և դադարեցման հիմքերը:

2. Խորհրդի ստեղծումը պայմանավորված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա Պաշտպանի՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակներում խորհրդատվական աջակցություն ստանալու անհրաժեշտությամբ:

3. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև սույն Կարգով:

4. Խորհուրդը գործում է օրինականության, արդարության, թափանցիկության և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

5. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով՝ Պաշտպանի որոշմամբ նախատեսված ժամկետով:

## ԳԼՈՒԽ 2
## ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ

6. Խորհրդի նպատակն է խորհրդատվական աջակցություն տրամադրել Պաշտպանին՝ կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով պայմանավորված լիազորությունների իրականացման ընթացքում, այդ թվում՝ աջակցել ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովմանն առնչվող

խնդիրների վերհանմանը և իրավասու մարմիններին և կազմակերպություններին դրանց լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմանը:

7. Խորհրդում կարող են քննարկվել ազատությունից զրկման վայրերի կամ այդ վայրերում պահվող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ Պաշտպանի հաղորդումները և զեկույցները, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը և համապատասխան առաջարկությունները, միջազգային և հասարակական կազմակերպությունների զեկույցները, ինչպես նաև խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ոլորտում առկա համակարգային և հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրները:

## ԳԼՈՒԽ 3
## ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

8. Խորհուրդը կազմավորվում է Պաշտպանի որոշմամբ՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից:

9. Խորհուրդն ի պաշտոնե ղեկավարում է Պաշտպանը, իսկ նրա բացակայության դեպքում՝ իր որոշմամբ Պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը:

10. Խորհրդում հասարակական կազմակերպության ներկայացուցչի կամ անկախ մասնագետի ընդգրկման հարցը լուծելիս նախապատվությունը տրվում է նրանց, ովքեր ունեն խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման ոլորտում մասնագիտական գործունեության փորձ:

11. Խորհուրդը բաղկացած է ոչ պակաս, քան 5 և ոչ ավելի, քան 15 անդամից:

12. Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն Խորհրդում կարող է ունենալ առավելագույնը մեկ ներկայացուցիչ:

13. Խորհրդում նոր անդամի ընդգրկումը կատարվում է սույն Կարգին համապատասխան՝ Պաշտպանի որոշմամբ՝ Խորհրդի անդամների հետ քննարկման հիման վրա:

## ԳԼՈՒԽ 4
## ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

14. Խորհրդի անդամ կարող է լինել հայերենին տիրապետող, 21 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացին՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

15. Նախապատվությունը տրվում է իրավաբանի, մանկավարժի, բժշկի, հոգեբանի, սոցիոլոգի, սոցիալական աշխատանքի մասնագիտություն և համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձանց:

16. Խորհրդի անդամը միաժամանակ չի կարող լինել ազատությունից զրկման վայրերում կամ խոշտանգումների կանխարգելման ոլորտում մշտադիտարկման գործառույթներ իրականացնող հասարակական կամ որևէ այլ խմբի անդամ:

## ԳԼՈՒԽ 5

### *ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ*

17. Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

18. Խորհրդի նիստերը, որպես կանոն, տեղի են ունենում դռնփակ, իսկ Պաշտպանի կամ Խորհրդի նախաձեռնությամբ՝ Պաշտպանի որոշմամբ անց են կացվում Խորհրդի ընդլայնված նիստեր:

19. Խորհրդի դռնփակ նիստերին մասնակցում է Կանխարգելման ազգային մեխանիզմի համակարգողը: Նիստերին կարող են մասնակցել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատողները, ինչպես նաև Կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետները:

20. Խորհրդի անդամներին նախապես տրամադրվում է նիստի օրակարգը:

21. Խորհրդի անդամները նիստերի ընթացքում ազատ են իրենց դիրքորոշումը գրավոր կամ բանավոր ձևով արտահայտելու հարցում:

## ԳԼՈՒԽ 6

### *ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ*

22. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում կամ կասեցվում են Պաշտպանի որոշմամբ:

23. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են կասեցվել, եթե նրա նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, կամ եթե Խորհրդի անդամների երկու երրորդը այդ մասին պատճառաբանված միջնորդություն է ներկայացրել Պաշտպանին:

24. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վերականգնվել Պաշտպանի որոշմամբ, եթե վերացել են սույն կետի 1-ին և 2-րդ պարբերություններում նշված հանգամանքները:

25. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են, եթե՝

1) լրացել է նրա լիազորությունների ժամկետը.

2) առկա է նրա դիմումն իր լիազորությունների կատարումից հրաժարվելու վերաբերյալ.

3) առկա է Խորհրդի անդամների երկու երրորդի համապատասխան հիմնավորված միջնորդությունը.

4) առկա է նրա թեկնածությունն առաջադրած կազմակերպության դիմումը՝ նրա լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ.

5) նա լիազորություններն իրականացնելիս կատարել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ սույն Կարգի պահանջները խախտող գործողություններ.

6) երկարատև հիվանդության պատճառով չի կարող կատարել Խորհրդի անդամի պարտականությունները.

7) մեկ տարվա ընթացքում երեք անգամ անհարգելի պատճառներով ներկա չի գտնվել Խորհրդի նիստերին.

8) նրա նկատմամբ առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ.

9) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով վերջինս ճանաչվել է անգործունակ.

10)նա մահացել է:

## ԳԼՈՒԽ 7
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Սույն Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Պաշտպանի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ կամ Խորհրդի անդամների առաջարկությամբ:

Հավելված № 2
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2020 թվականի հոկտեմբերի 9 -ի
թիվ 38 Ա որոշման

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

| | |
|---|---|
| Ավետիք Իշխանյան | «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» ՀԿ նախագահ |
| Միքայել Արամյան | «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ նախագահ |
| Արշակ Գասպարյան | «Սոցիալական արդարություն» ՀԿ նախագահ |
| Վարուժան Սեդրակյան | «Հայաստանի մանկական ասոցիացիա» ՀԿ |
| Աննա Մարգարյան | ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետի Քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ |
| Սոնա Առաքելյան | Անկախ փորձագետ սոցիալական աշխատանքի գծով |
| Արտակ Կիրակոսյան | «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ տնօրեն |
| Ժաննա Ալեքսանյան | «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» ՀԿ նախագահ |